Առնելով այս գոյժը, Ռաշիդ ուղարկեց Բու-նագարին (?)[1], հրամայելով նորան ձերբակալել Սայիդ ի. Սալմին. երբ նա տեղ հասաւ, Սայիդ տուեց նորան պարգեւներ, որ նա հաճութեամբ ընդունեց. Ռաշիդ իմացաւ այս բանի մասին եւ ուղարկեց նասր ի. Հաբիբ Մուհալլաբին կառավարչի պաշտօնով, սակայն շուտով հեռացրեց նորան եւ նշանակեց Ալի ի. Խայ ի. Մուհանին։ Նորա վատ վարմունքի պատճառով Շարուանի բնակիչք ապստամբեցան նորա դէմ, եւ առհասարակ ամբողջ երկիրը յուզեցաւ։ Այն ժամանակ Ռաշիդ նշանակեց Եզիդ ի. Մազեադ Շայբանիին կառավարիչ միաժամանակ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ, որի գալովն զօրքը հանդարտեցաւ եւ երկիրը խաղաղացաւ եւ բարեկարգեցաւ. նա հաշտեցրեց նպարներին եւ Եմենացիներին, (բարի յոյսեր տուեց իշխանաց ժառանգներին եւ նախարարներին։

Նորանից յետոյ Ռաշիդ գրեց Խուզայմայ ի. Խազիմ Տամիմին կառավարիչ, որ ձերբակալեց նախարարներին եւ իշխանաց ժառանգներին եւ գլխատել տուեց նոցա. առհասարակ նա վատ վարուեցաւ նոցա հետ։ Ջորջան եւ Ծանարք ապստամբեցան. նորա ուղարկած զօրագունդը թշնամին կոտորեց. ապա նա յղեց նորա դէմ Սայիդ ի. Հայդամ ի. Շրայ ի. Զահիր Տամիմին բազմաթիւ զօրքով, որ պատերազմեցաւ Ջորջանի բնակչաց եւ Ծանարների հետ, արտաքսեց նոցա երկրից եւ վերադարձաւ Տփղիս։ Խուզայմայ մնաց (Հայաստանում) մի տարուց սակաւ. Ռաշիդ հեռացրեց նորան եւ նշանակեց Սուլէյման ի. Եզիդ ի. Ասամ Ամիրին, որ մի բարի եւ անհոգ ծերունի էր եւ այն ատիճան թոյլ, որ նորա հրամանն անդամ

---

1 Անուանս առանց կէտագրութեան է։

2 Թերեւս այլ ձեռագրի قبض ընթերցումն դերադասելու է։